

## Դաս Դ. Աղոթն :

Այ կարգի կենդանիներն ալ՝ կենդանածիններուն ու թռչուններուն պէս օդով կը սահնանին, և իրենց ձագերը հաւկը մով կը ծնանին . բայց իրենց արեան շրջանը անկատար է, և տաքութիւնն ալ օդին տաքութեանը հաւասար է, անոր համար ձկներուն պէս պաղարիւն կը սեպուին : Ստամոքսնին մէկ է, և մարմնոյն մէջէն եղած բոլոր արիւնները թոքին մէջէն չանցնիր, հապա միայն մէկ կտորը . իսկ մնացած արիւննին շնչերակի արեան հետ խառնուելով՝ մարմնոյն մէջ կը պտըտի, առանց թոքերնուն մէջէն անցնելու : Այեան գնտակները թռչուններուն պէս ձուածեն են : Ողողունները ձուածին են, բայց իրենց հաւկիթներուն վրայ թուխս չեն նստիր . ոմանց հաւկիթն ալ իրենց փորերնուն մէջ կը բացուի :

Այ դասը կը բաժնուի չորս կարգ :

## Դաս Դ. Զուկ :

Զկներուն դասը ողնաւոր ձուածին են . ասոնց շնչառութիւնը ջրի մէջէն է . թոք չունին, թոքի տեղ՝ իրենց անկածը այլեայլ բլթակներ բաժնուած ըլլալով՝ ջուրը անոնց մէջ կը մտնէ, ու պէտք եղած շնչառութեան մնունդը անկէ կ'անցնի, արեան հետ կը բաղադրուի, և անկէ բոլոր մարմնոյն մէջ կը տարածուի :

Զկները ամէնն ալ ընդհանրապէս ակռայ ունին, և իրենց կազմուածքը լողալու յարմար է : Շատերը իրենց ընդերաց մէջ պարկ՝ մը ունին օդով լեցուն, և ամէնն ալ լողալու մէյմէկ կերպ ունին . ոմանք քովընտի կը լողան, ոմանք փորերնուն վրայ, ոմանք միշտ գէպ'ի առաջ կ'երթան, ոմանք ալ ցատքըտելով կը բալեն :

Այ դասն ալ ինը կարգ կը բաժնուի : Այդի վեց կարգին տակը կ'իյ-

նան ոսկորոտ ձկները . իսկ ետևի իրեքին տակը կ'իյնան աճառաւոր ձկները :

Ուրիշ յօդուածով կը խօսինք մէկալ մասերուն վրայ ալ :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ակնբուժ երիրագործութեան :

Դ

Բայսերու վրայ :

Հ. Ռոյսն ի՞նչ է .

Պ. Ռոյս կ'ըսուի ան արարածը որ շարժելու կամտեղը փոխելու կարողութիւն չունի, թէպէտ և կենդանեաց պէս գրեթէ կը ծնանի, կ'ապրի ու կը մեռնի . գետնէն ու օդուն մէջէն ծծած հիւթովը կը սնանի ու կը մեծնայ, և իրեն նման բոյսեր կ'արտադրէ : Ագործողութիւններս բոյսը իր գործարաններովը կ'ընէ . բայց ամէն բոյս նոյնչափ գործարան չունի . կապարեալ ըսուած բոյսերը հինգ գործարան ունին, որ են արմատ, ցօղուն, տէրև, ծաղիչ, պառաղ : Ասոնցմէ առջի իրեքը սննդեան գործարաններ կ'ըսուին :

Հ. Ո՞րն է արմատը :

Պ. Ռոյսին վարի կտորն է որ հողուն մէջ խրած է . ասիկայ բոյսը գետնին վրայ հաստատուն բռնելու համար է . բարակ բարակ թելեր ունի որ նազմղուէ կ'ըսուին, և աս մազմբ զուկներուն սանդածե ծայրերովը կը ծծէ բոյսը հողին մէջէն իրեն սննդարար հիւթը, որ բոյսին ամէն կողմը կը տարածուի, ու հոյը՝ կ'ըսուի :

Հ. Ո՞րն է ցօղունը :

Պ. Հօղունը բոյսին արմատէն վերեղած մասն է . և ասով միայն անկէ կը տարբերի որ հողէն դուրս ցցուածէ,

ուստի արեւուն Ճառագայթներն ալ վրան կը զարնեն . առաջին ծունէ կամ իւսական հաղ կ'ըսուի ան միջոցը՝ ուսկից արմատն ու ցողունը կը բաժնուին, ու մէկմէկուներհակ դիրքով կ'երկըննան :

Հ. Ո՞րն է տերեւը .

Պ. Տերեւները տեսակ մը տափակ տափակ ցողուններ են՝ քիչ շատ լայնութեամբ, որ ընդհանրապէս կանաչ կ'ըլլան, ու վրայի երեսնին ողորկիսկ ձեւերնին կերպ կերպ կ'ըլլայ: Տերեւները բոյսին աս օգուտոս ունին, որ անոր մարսողական գործարանը կրնան սեպուիլ . վասն զի հոյզը ինչուան տերեւները հասնելէն ետքը այլեայլ նիւթ կը ձեւանայ :

Հ. Ո՞րն է ծաղիկը .

Պ. (Կ)աղիկը բոյսին վրայ ամենէն գեղեցիկ կտորն է, բայց շատ չդիմանար . ասոր գլխաւոր կտորներն են բաժակ, պսակ, առէլք, նորմ, սերնարան: Բաժակը դրսի կանաչ մասն է . պսակը գունաւոր թերթերն են . առէլքը ծաղկին մէջի թելերն են . ասոնց ծայրնեղած տուփի ձեռովկտորը մուրճ կ'ըսուի . և սերմնարան՝ մուրճերուն մէջ տեղի հաստ կտորն է: ( Երինակի համար Ճերմակ շուշանին՝ դրսի կանաչ տերեւները բաժակ են, բուն Ճերմակ ծաղիկը պսակ, մէջի թելերը առէլք, թելերուն վերի կտորը մուրճ, անոնց մէջտեղի կտորը սերմնարան: Երբոր առէլքներուն վրայի մուրճերը կը բացուին, անոնց մէջի փոշին կ'իյնայ սերմնարանին վրայ . անկէ ալ կ'անցնի սերմնարանին վարի կողմը՝ ուր է հունտը . աս հունտին կեղեր երթալով կը հաստընայ ու կ'ըլլայ պըտուղ, և ծաղկին մէկալ մասերը կը չորնան ու կը թափին . իսկ պտուղը կամաց կամաց կը մեծնայ, և անոր մէջ կ'ըլլան բոյսին հունտերը :

Հ. Հունտ մը հողին մէջ թաղես նէ ինչ կ'ըլլայ .

Պ. Երբոր հունտ մը խոնաւ հողի

մէջ կը թաղես, տաքութիւն՝ ջուր և օդ կը ծծէ . ասով մէջէն բոյս մը կը ծլի . արմատը հողուն մէջ կ'երկըննայ կը խրի, իսկ ցողունը դէպ 'ի վեր օդուն մէջ կը բարձրանայ ու մէկ երկու մանր կանաչ տերեւներ կ'արձըկէ . ետքը կամաց կամաց կը մեծնայ, տերեւներով ծաղկըներով ու պտղով կը զարդարդարուի ինչուան որ չորնայ : Ի՞ոյս կայ որ մէկ տարիէն աւելի չդիմանար, հապա մէկ տարուան մէջ կը ծնանի, ու իր հունտը հասունալէն ետքը կը մեռնի, ինչպէս է ցորենը, լութիան, ևն . ասոնք դամէան կ'ըսուին: Ի՞ոյսեր ալ կան որ երկու տարիէն ծաղիկ ու հունտ կուտան ու ետքը կը չորնան, ինչպէս ստեղղինը, կաղամբը, և այլն . ասոնք կ'ըսուին երկամէան: Իսկ անոնք որ շատ տարիներ կ'ապրին՝ բաղմամէան կ'ըսուին . ասոնցմէ շատին միայն արմատը կը դիմանայ, իսկ ցողունը աշնան կը փառնայ, ու գարնան նոր ցողուն կուտայ արմատին առաջին ծունկէն :

#### ՕԳՏԱԿԱՄ ԳԻՒՑ

Ո՞ր և ի՞նչ ետաղ հագրելու ու ժայկուցնելու հարք :

ՈՍԿԻ, արծաթ, պղինձ, պողպատ', ողորկ երկաթ, և ասոնց նման մետաղները մաքրելու կամ փայլեցընելու համար՝ սովորաբար տեսակ տեսակ թթուուտով բաղադրած ջրեր կամ զանազան փոշիներ կը գործածուին: Ի՞այց անոնք աս պակասութիւնս ունին որ կամաց կամաց մետաղները կ'ուտեն, շատ անգամ կապարի գոյն մը կուտան արծըթեղէններուն, աշխատանքն ալ շատ է. թողոր փոշիներէն ոմանք սնդիկով՝ ու կիրի ածխուուտով բաղադրած ըլլալուն համար՝ առողջութեան ալ վնասա-